թերթի նպատակը, ինչ պիտի լինի նրա ուղղութիւնը: Մեր քաղաքում կայ այժմ մի գաւառական թերթ հայոց լեզուով «Պակ» վերնագրով, բայց այդ լրագրի ուղղութենից, նրա նիւթերի բովանդակութիւնից պարզ երևում է, որ խմբագիրը հիմնել է իր լրագիրը, — եթէ միայն լրագիր անունը կարելի է նրան տալ, — միմիայն իր անձնական վրէժը հանելու գիտմամբ մի քանի իրան անհաճելի անձնաւորութիւններից: Եւ ճշմարիտ այդպէս էլ վարվում է խմբագիրը. ասում են որ նա սորան նրան դիմում է խնդրելով որ գրեն յօդուածներ իր այս կամ այն անձնական թշնամու դէմ: Այսպիսով նա դիմել է «Մշակի» թղթակիցներից մինին, խնդրելով որ մի յօդուածով խայտառակէ պ. Բէգ-Նազարեանցին, բայց որովհետև դա չէ կամեցել պ. Բարաֆանեանի խնդիրը կատարել, իսկոյն «Պակի» ֆելիետոնի մէջ երևեցաւ նոյն թղթակցի նը կարագիրը իբր թէ նա հարբող է, գինեներում ընկած, այնտեղ ամբողջ գիշերներ անցնող մարդ է: Եթէ այս է մի գաւառական թերթի նպատակը, — դա մեծ օգուտ չէ կարող տալ ժողովրդին:

Ցաւալի չէ արդեօք, որ մեր լրագրութիւնը այդ կորստաբեր շաւիղով է առաջ գնում, մէն մի օրինակ առնելով: Նորերումս «Պակի» մէջ կար տպված մի նամակ Վաղարշապատից «Մշակի» ազատակար ուղղութեան դէմ և տակը ստորագրված «ստորագրութիւնք» բառը, կարծես թէ հարիւր մարդ են ստորագրել: Երևի ստորագրութիւնք բառը վերաբերվում է Ղ. Տէր-Ղազարեանցին: Բայց ընդհակառակն երևանցիներից շատերը և նոյն իսկ ես իմ սեփական աչքերով տեսած եմ փոստով վերադառնող համարները, որոնց վրա հետևեալ մակագրութիւն է լինում առուսերէն լեզուով «վերադարձնել իրան խմբագրին:»

Եթէ արդարև Բարաֆանեանը հիմնել է իր թերթը սորան նորան հայհոյելու, փողոցային բառերով, — գոնէ ջէջէր այդ թերթի վերնագրից մանկավարժական և գրականական վեմ բառերը: «Պակի» նշանաբանն է՝ հայհոյանք և խայտառակութիւն:

Շատերը պատրաստվում են «Պակի» հայհոյանքներին պատասխանելու, բայց իրենց պատիւը լռութեան մէջ որոշեցին, վասն զի այդ լրագրի բռնած ընթացքը տեղիք է տուել երևանցիներից շատերին կասկածելու խմբագրի ուղեղի առողջ տրամադրութեան վրա:

Ա. Եր.

խումբին. «Գիտենք որ լուսաւորչական հայքդ կը կազմեր ազգին ամենաստուար մեծամասնութիւնը, բայց գիտենք նաև որ դարուս ոգին ներշնչեալ անշուշտ ո և է խոտութիւն չէ գներ ձեր այն եղբարց մէջ, որոց դաւանանքն ձեզմէ տարբեր է:» — Գ. Գրայս եթէ քաղաքավար կերպով փոքր դաս մը կուտայ մեզ, զգացած է որ այս դասին պէտք ունինք: — Ներկայ պարագայից մէջ մեզմէ տարբեր դաւանանք ունեցող հայերուն կարևորութիւնը անուրանալի է, և եթէ փիլիսոփայական զգաստարները մեզ առաջնորդ չեն, գէթ մեր բաղաքագիտական շահերուն ունկնդիր լինինք: Այսօր հեռագիրն կը հաղորդէ մեզ թէ գեր. Հասուն մօտ օրերս կընդունի կարդինալութիւն և պիտի բաղմի կարդինալաց ժողովոյն մէջ: — Տեղւոյս ամենէն կարևոր թերթերէն մին Ֆրանքֆուրտ — անգղիական «Սթամպուլը» քանի մը օր առաջ այս առթիւ հրատարակած մէկ յօդուածովը ցոյց կուտար թէ Եւրոպա ինչ մեծ կարեորութիւն կընծայէ հայ կաթոլիկութեան: — Մեզ համար վերջին աստիճան անքաղաքագիտական գործ մէ ելլել կաթոլիկ և բողոքական հայոց զէմ յարձակումներ ընել ճիշտ այն պահուն, երբ կաթոլիկ և բողոքական կառավարութեանց պաշտպանութիւնը կը խնդրենք: Տիֆլիսի մէջ հրատարակուած մի քանի յօդուածներ մեծ ցաւ կը պատճառեն մեզ. անգղիացւոց ինչ աստիճան կրօնասէր լինելնին գիտենք, և եթէ այս օրինակ յօդուածներ Անգղիոյ թերթերուն մէջ թարգմանել տան մեր թշնամիք, բաւական խելացութիւն բրած պիտի լինին: Անշուշտ գիտէք որ «Մշակ» և «Մեղու» հոս անգղիական դեսպանատունը կընդունի և կարևոր յօդուածներն կը թարգմանուին, իբր կարծիք ռուսական հայոց և կը խրկուին ուր որ անկ է:

Հասուն գերապայծառ երբ կարդինալութիւն ընդունի, պիտի մեկնի ի Հռոմ և հոն կարդինալաց ժողովոյն մէջն պիտի ուղղէ արևելեան գործերն. հոս իրեն յաջորդ մը պիտի ընտրուի, և հաւանօրէն կը գաղրի հասունանց և հակահասունանց վէճն: Պախխիարեան, հակահասունանց ընտրած կաթողիկոսը հնազանդութիւն բրաւ Հասունի:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Սեպտեմբերի 24

Ուղարկելով ընդամէն չորս բուբլի (4 ր.) որ տիկին Մաքթաղ և օր. Մարիամ Տէր-Ներսէսեանները նուիրել են միանուագ յօդուտ «Արարատեան» այժմ «Միացեալ ընկերութեան հայոց» ի Կ. Պոլիս, պարտք եմ համարում «Մշակի» 161 թուահամարում դրած բացատրելու համար յայտնել, որ ընկերութեան օգտին ժողովված փողերը ես ընդունել եմ անցեալ տարուայ սկզբումն եկեղեցական դումարի մէջ մինչև ապաւիների ժողովելը և խմբագրութեանդ ուղարկելը, որպէս զի նորա շահիցը օգտվի ս. Աթոռս մայր եկեղեցին և արդէն, ինչպէս յայտնի է, 1879 թուականի մարտից և ելից տումարէն այդ տոկոսքը մտած են յիշեալ եկեղեցու արկղը, որ իր լրութեամբ պատկանում է Գանձակի բաղմակարօտ երկսեռ դպրոցներին և նշանակված է նրանց շինութեանց համար: Բայց մեզ վրա ոչինչ տոկոսք չէ մնում, ինչպէս կարծում է պ. Թոխմախեանը:

Իսկ ինչ վերաբերում է տարեկան անդամակցութեան յիշեալ ընկերութեան իմ կողմից լաւ համարցի փոխարինել տարեկան փոքրիկ նուէրը միանուագ 100 բուբլ տալով, որ արդէն հասած է ըստ պատշաճին:

Երեցփոխան Ն. Տ՝ր-Նելսէսեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Սեպտեմբերի 14

Վերջին օրերումս, սկսեալ յուլիսի 26-ից, այսինքն այն օրից, երբ Շամախու հասարակութիւնը չին երեցփոխանին արձակել է և եկեղեցու շինութեան հաշիւը պահանջում է նրանից, «Մշակ» լրագրի միջոցաւ, (ինչպէս երևում է նրա 149, 160 և 165 համարներից,) հրատարակված են մի քանի գրվածներ, որոնք իրանց անհիմն և ինքնաշնար բովանդակութեամբ բոլորովին ստարոտի հիմն են մի հասարակութեան համար: — Տեղեկութիւններն, որոնք գրված են անանուն յօդուածագրի գրչով միայն արձագանք են կրել և ոչ այլ ինչ. առհասարակ ստում է պ. յօդուածագիրը ամեն մի գործի վերաբերութեամբ, որոնք հաստատվում են հետևեալ փաստերով: — Չորս տարի է, որ Շամախու հասարակութիւնը իր սիրելի առաջնորդ Թադէոս եպիսկոպոսի ջանասիրութեամբն և նրա վարդապետի աջակցութեամբ առաջ է խաղացնում իր ազգային երևելի գործերը. — դրանք են տեղւոյս Մայր եկեղեցին, օրիորդաց ուսումնարանի շինութիւնը և ս. Սեփանոսի վանքը Սաղիանու, որոնք յաւիտենական վկաներ են սրբազանի աշխատասիրութեանը, դեռ մնան այլ բարեգործութիւնները, որք կը յայտնվեն իրանց ժամանակին: Բայց երկսեռ դպրոցների մասին, որ յօդուածագիրը երազում է, բոլորովին անտեղի են, որովհետև նրանց մէջ դասատուութեանց շարունակութիւնները կանգ առած չեն երբէք, ինչպէս, շնորհիւ մեր սրբազանի, այժմ էլ շարունակվում են: Եւ եթէ ներկայ սեպտեմբերի 1-րդ մասումը դասատուութիւնքը փոքր ինչ յետաձգվեցան, բայց դրա պատճառն էին մի երկու շաբաթվայ հոգաբարձուներ և ոչ սրբազանն ինքը կամ նրա վարդապետը: Իսկ ինչ կը վերաբերի կրօնական արարողութեանց, կասենք, որ յօդուածագիրը միայն իր ցուրտ զգացմունքն ու սառնասրտութիւնն է գծագրել դէպի նա, և ոչ մեր մէջ պատահած մի եղելութիւն:

Այժմ դառնալով դէպի յարգոյ խմբագիրը «Մշակի» կը խնդրենք, որ նա տեղիք չը տայ այսուհետև լցնելու իր պատուական լրագրի էջերը մի այս տեսակ խառնակէջ ստայող գրուածներովը ինչպէս վերոյիշեալ համարներումը տպված են Շամախու դրութեան վերաբերեալ սուտ և անտեղի լուրերը: Մենք տարակուսութիւն չունենք կըրքոտ յօդուածագրի մասին, որովհետև այլ է մեր, ճշմարիտ զգացմունքը դէպի արդարութիւնը, այլ է և նրա զրպարտութիւնը դէպի նոյնը: Սակայն խռովարար կուսակցութիւն երը, որ երևակայում է նա, միայն լրագրի մէջն ենք տեսնում, իսկ մեր քաղաքի հասարակութիւնը խաղաղ և անվրդով կեանք է անցկացնում, առանց ուշադրութիւն դարձնելու յօդուածագրի անձնաւորութեան վրա: Կը խնդրենք յարգոյ խմբագրից, որ տեղ շնորհէք մեր այս նամակին «Մշակի» մի անկիւնումը՝ ի միամտութիւն յարգոյ ընթերցողների:

Ալ. Լալայեանց, Յակոբ Գեօղչայեանց, Կոլէմակի աստէսոր Յակոբ Միկիտեանց, Գէորգ Տէր-Յովհաննէսով, Մկր. Աւշարով, Գէորգ Կամկամեան, Ալէքսանդր Նաջարեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» № 176 մէջ սովեալների մի ցուցակի մէջ մի սխալ մտաւ: Կոնստանդին Շահնազարեան որ նուիրեց 5 բուբլ բոլորովին յիշված չէ եղել: Բացի սորանից փոխանակ օրիորդ Սոֆիա Շահնազարեան, պէտք է լինի տիկին Սոֆիա Շահնազարեան:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Ա. Քալանթարեանցի հեղինակութիւնը ռուսերէն լեզուով «Ռուսաստանի անասունների արդիւնաշատութեան խնդիրը» (Къ вопросу о производительности Русскаго скота): Գրքոյկը տպված է Մոսկվայում, ներկայ 1880 թվին, Մարտինովի տպարանում: Այդ աշխատութիւնը կազմում է մի բաւական մշակված, Ռուսաստանում եղած անասնապահութեան այլ և այլ ձևերի տնտեսական քննութիւնը:

—

Մեզ խնդրում են յայտնել որ Ներսիսեան ազգային-հոգևոր դպրոցի նոր հոգաբարձուների ընտրութիւնը կը լինի ներկայ հոկտեմբեր ամսի 19-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին, նոյն դպրոցի մէջ, որի մասին արդէն քաղաքիս բոլոր եկեղեցիների մէջ եղած է ծանուցումն:

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են, սեպտեմբերի 21-ին, տեղային երիտասարդութեան խնդրանաց համեմատ, Խորէն աւագ քահանայ Բարսեղեանցը հրաւիրեց քաղաքի զանազան դասակարգին պատկանող անձանց, և առաջարկեց նուէրներ հաւաքել յօգուտ թիւրքաց Հայաստանի սովատանջների: Նոյն ժողովում ստորագրեցին մինչև 404 բուբլի: Ստորագրութիւնները դեռ շարունակվում են: Մի և նոյն նպատակով դիտաւորութիւն ունեն ստորագրութիւն բացանել կանանց սեռի մէջ: Այդ աշխատութիւնը յանձն են առել տիկին Աշխէն Բախչեանց և օրիորդ Ս. Յովհաննէսեանց:

—

Օրերումս մի ալաշկերտցի 15 տարեկան աղջիկ մտնում է ՔԱՄՈՆՑ եկեղեցու բակը մուրացկանութեան համար: Նոյն բակում բնակվող մի հրէայ ընտանիքի ոլորդին մօտենում է աղքատ աղջկան և անհամեստ առաջարկութիւն է անում: Վիրաւորված աղջիկը բռնում է նրա կոկորդից և կամենում է խեղդել: Սկեղեցու ժամկոչը և ուրիշները վրա են հասնում և ազատում են հրէային: Նամա-

---

խմբին. «Գիտենք որ լուսաւորչական հայքդ կը կազմեր ազգին ամենաստուար մեծամասնութիւնը, բայց գիտենք նաև որ դարուս ոգին ներշնչեալ անշուշտ ո և է խոտութիւն չէ գներ ձեր այն եղբարց մէջ, որոց դաւանանքն ձեզմէ տարբեր է:» — Գ. Գրայս եթէ քաղաքավար կերպով փոքր դաս մը կուտայ մեզ, զգացած է որ այս դասին պէտք ունինք: — Ներկայ պարագայից մէջ մեզմէ տարբեր դաւանանք ունեցող հայերուն կարևորութիւնը անուրանալի է, և եթէ փիլիսոփայական զգաստարները մեզ առաջնորդ չեն, գէթ մեր բաղաքագիտական շահերուն ունկնդիր լինինք: Այսօր հեռագիրն կը հաղորդէ մեզ թէ գեր. Հասուն մօտ օրերս կընդունի կարդինալութիւն և պիտի բաղմի կարդինալաց ժողովոյն մէջ: — Տեղւոյս ամենէն կարևոր թերթերէն մին Ֆրանքֆուրտ — անգղիական «Սթամպուլը» քանի մը օր առաջ այս առթիւ հրատարակած մէկ յօդուածովը ցոյց կուտար թէ Եւրոպա ինչ մեծ կարեորութիւն կընծայէ հայ կաթոլիկութեան: — Մեզ համար վերջին աստիճան անքաղաքագիտական գործ մէ ելլել կաթոլիկ և բողոքական հայոց զէմ յարձակումներ ընել ճիշտ այն պահուն, երբ կաթոլիկ և բողոքական կառավարութեանց պաշտպանութիւնը կը խնդրենք: Տիֆլիսի մէջ հրատարակուած մի քանի յօդուածներ մեծ ցաւ կը պատճառեն մեզ. անգղիացւոց ինչ աստիճան կրօնասէր լինելնին գիտենք, և եթէ այս օրինակ յօդուածներ Անգղիոյ թերթերուն մէջ թարգմանել տան մեր թշնամիք, բաւական խելացութիւն բրած պիտի լինին: Անշուշտ գիտէք որ «Մշակ» և «Մեղու» հոս անգղիական դեսպանատունը կընդունի և կարևոր յօդուածներն կը թարգմանուին, իբր կարծիք ռուսական հայոց և կը խրկուին ուր որ անկ է:

Հասուն գերապայծառ երբ կարդինալութիւն ընդունի, պիտի մեկնի ի Հռոմ և հոն կարդինալաց ժողովոյն մէջն պիտի ուղղէ արևելեան գործերն. հոս իրեն յաջորդ մը պիտի ընտրուի, և հաւանօրէն կը գաղրի հասունանց և հակահասունանց վէճն: Պախխիարեան, հակահասունանց ընտրած կաթողիկոսը հնազանդութիւն բրաւ Հասունի:

Ազգ. ժողովը երէկ նիստ բրաւ, Ցանձնաժողովի մը կազմեց Պատրիարքական ճառին պատասխանը պատրաստելու: Այս նիստը նոր կարևորութիւն մը ունի, վասն զի Կ. Պոլսոյ Ազգ. ժողովոյ և Էջմիածնայ հետ յարաբերութեանց խնդիր մը կը ծագի: Գ. Ս. Փափազեան առաջարկ մը կը ներկայանայ թէ «Էջմիածին 17000 բուբլի ուզի Ալաշկերտի գաղթականաց համար, եթէ այդ դումարը Ռուսաստանի հայք տուած են ալաշկերտցոց թշուառութիւնը դարմանելու, Վեհ. Կաթողիկոսը այդ դրամն արժէքուղղ բրած է և յԱլաշկերտ դպրոցի մը հաստատութեան պիտի գործածէ, բայց քանի որ սովը սաստիկ կը շարունակէ, պէտք է որ այդ դումարը այժմ յատկանայ Ալաշկերտի սովեալներն խնամելու, հետևաբար Ազգ. ժողովը խնդրէ Վեհ. Կաթողիկոսէն, որ այդ դրամն իր նպատակին գործածուի:» — Գ. Փափազեանի առաջարկն ժողովէն ընդունվեցաւ և Ազգ. վարչութեան յանձնուեցաւ անմիջապէս նորա գործադրութեան նայել:

Մեր Ազգ. ժողովոյ այս ըրած կարևոր քայլը ոչ մէկու աչքէ կրնայ վրիպիլ, մէկ կողմէ նախանձախնդիր կը ցուցնէ ինքզինքն իբր ներկայացուցիչ ազգին հակել ամեն նուիրատուութեանց վրա, որ իր նպատակին չը գործածուեր, միւս կողմէ Էջմիածնայ գործոց միջամտութիւն կը սկսի ընել: — Նայենք հոս հասարակաց կարծիքն ինչ կրսէ այս խնդիրներու վրա: — Նոյնպէս ըստ պ. Փափազեանի առաջարկին մասնաւոր կերպով ժողովն իր ինչ ընելն և Տաճկաստանի հայոց ինչ վիճակի մէջ լինելն պաշտօնապէս Վեհ. Կաթողիկոսին պիտի հաղորդէ այս խնդրոյն վրա ուրիշ առնն աւելի ընդարձակ կը գրենք:

Հայաստանէն սովու մասին ցաւալի տեղեկութիւններ կը հասնին. անմիջական 50,000 բուբլի պէտք կայ պ. Կիւլզէնկեան և Աբեկուռեան իրենց կողմէ փող պիտի տան այդ ստակը և ապագայ հանգանակութիւններէն պիտի առնեն:

Եւրոպայէն նոր հեռագիր չը կայ, բայց կերևի թէ վերջին ծանուցագիրը վատ տպաւորութիւն մը արած պիտի ըլլայ:

Եւրոպական նաւատորմիղը Դարդանելէն ներս մտնելու հաւանականութիւն կայ: Թիւրքերը մեծ պատրաստութիւններ կը տեսնեն. կղզիներէն, նեղուցներն կամրացնեն, ամեն կողմ թորբիլներ կը զետեղեն, ամեն կերպով Եւրոպայի դիմադրելու կը պատրաստուին: — Կարծեմք թէ հոս նեղ ժամեր պիտի անցնենք: — Վերջին ծանուցագիրն կառավարութիւնը շուտով հրատարակեց. այդ ծանուցագիրն հրատարակել տալով կառավարութիւնը տաճիկ հասարակութեան համակրութիւնը կուզէ բոլորովին գրաւել. այսպէս զոհողութիւններ կընեմք պիտի ըսէ և դեռ Եւրոպա գոհ չէ, ուրեմն պատերազմնք: Թիւրք կառավարութիւնը կը կարծէ որ իրեն անհնար պիտի լինի յաղթուելէ առաջ Եւրոպայի կամքը կատարել: — Ծանուցագիրը հետևեալ լուրեր կը պարունակէ. 1. Զէյնեզորիայի խնդիր. 2. Ցունական խնդիր. — 3 Բարենորոգութիւնք հայոց բնակած տեղերը. 4 Կանոնագրութիւն կայսրութեան եւրոպական գաւառաց. 5. Բանկային խնդիր: — Մենք մեզի պէտք եղած կէտը առնենք:

Կառավարութիւնը նախ կը յայտարարէ որ եթէ՝ 61-րդ յօդուածի համեմատ տէրութեանց չէ աղորդած բրած բարեկարգութիւններն, պատճառն այն է, որ բայի քանի մը բաղաքներու մէջ ոստիկանական բարեկարգութիւններէ, կառավարութիւնը չէ կրցած պէտք եղած բոլոր բարեկարգութիւններն ընել: Դէշ արդարացում չէ: —

Բայց այժմ Պէյքր բաշայի և սերիշ պաշտօնէից բրած քննութեանց շնորհիւ որոշած է ի գործ դնել հետևեալ միջոցներն:

1. Էրզրումի, Վանայ, Բաղէշի և Տիգրանակերտի գաւառաններն աւելի լաւ կերպով կազմակերպել և բարեկարգել: — Կայսրութեան բարձրաստիճան բաշայ մը յատուկ պաշտօն պիտի ունենայ հսկել այդ բարեկարգութեան: —

2. Դուռը Եւրոպիոյ կառավարութիւններէն պահանջած երաշխաւորութիւններն ընդունելէն մինչև երեք ամիս վերոյիշեալ գաւառներու ոստիկանութիւնը և ժանդարման պիտի վերանորոգէ:

3. Ժանդարմայի գնդապետներն պատերազմի պաշտօնեայն պիտի ընտրէ: Միւս պաշտօնեաներն զանազան եղանակաւ պիտի ընտրուին և վարձացումը պատերազմի պաշտօնեայն պիտի ընէ:

4. Գաւառական նահիւներու բաժանումը 4 ամիսներու մէջ պիտի լրմնայ, յուլիս 5-ին Բ. Դրան առ տէրութիւնս տուած ծանուցագրին մէջ ցոյց տուած կազմակերպութեան եղանակին համեմատ:

5. Բացի մաքսատան, անուղղակի տուրքերէն հեռագրի և թղթատարութեան հասոյթներէն, միւս բոլոր տուրքերէն պիտի վճարուին գաւառին պաշտօնակալաց ծախքերն, մնացածն 10% պիտի յատկացուի տեղական պիտոյից, այսինքն շինութեանց, կրթութեան, և այլն, մնացած 90% ինչպէս նաև 10% է աւելցածը կենդրոնական գանձուն պիտի խրկուին:

6. Այդ գաւառաց պաշտօնէից ընտրութիւնը հաստատուած օրինաց համաձայն պիտի լինի: Բացի կարևոր պաշտօնեայներէ, երկրորդական պաշտօնէից ընտրութիւնը և հրաժարումը ընդհ. կուսակալը պիտի կրնայ ընել: — Ամեն օսմանցի հասարակաց պաշտօններու մէջ մտնելու իրաւունք պիտի ունենայ ըստ 2-ն յօդուած Պերլինի դաշնագրի և կայսրութեան օրինաց:

Նիզամի է դատարաններն ի գործ պիտի դնեն օսմանեան օրինագիրքը և կայսրութեան մէջ զօրութիւն ունեցող բոլոր մաս օրէնքներն:

Աշա ասենք են համառօտապար մեր խնդրոյն վերաբերեալ կէտերն: Խորհրդածութեանց պէտք չը կայ դարձեալ խօսիլ: Եթէ ամեն մէկ յօդուածին քիչ մը ուշադրութիւն ընենք, կը տեսնենք որ ամենքն ըստ կրեցութեան, ամեն բարեկարգութիւն ըստուածն ուրիշ բան չէ, բայց եթէ առջի վիճակն անխախտ պահել: — Ինչ որ աւելի զարմանալի է, այն է որ Դուռը առաջ կը բշէ յուլիս 5-ի ծանուցագիրը, որոյ համար այնքան կծու պատասխան ընդունեց տէրութիւններէն: Արդեօք դիտաւորութիւնը տէրութեանց վրա խնդալ է: Բարեբաղդաբար թրքաց կամացն ու հաճոյքն հնազանդ Եւրոպայ մը չը կայ, և յուսամք թէ պէտք եղած դասն շուտով տան Սարիդներու նման ամամէջ յանդուգներուն:

Հայկոն